Ֆինանսական միջնորդների շրջանակ (FIF) - Արևելյան գործընկերության ՓՄՁ մրցունակություն և ներառականություն - Հայաստանի համար նախատեսված՝ Փախստականների արձագանքման պատուհան - «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»

Երկիր	ՀԱՅԱՍՏԱՆ
Ծրագրի համար	57240
Բիզնես ոլորտ	Բանկային
Ծանուցման տեսակ	ՄԱՍՆԱՎՈՐ
Բնապահպանական կատեգորիա	Ֆինանսական հաստատություն (ՖՀ)
Հաստատման ամսաթիվ	12 մայիսի 2026թ.
Կարգավիճակ	Հաստատված է
Անգլերեն լեզվով ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման ամսաթիվը՝	18 մայիսի 2026թ.

Ծրագրի նկարագրություն

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին մինչև 10 միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով առաջնային վարկի տրամադրում՝ Արևելյան գործընկերության ՓՄՁ մրցունակության և ներառականության ծրագրի («Ծրագիր») շրջանակում, Հայաստանի համար նախատեսված «Փախստականների արձագանքման պատուհանի» ներքո՝ նպատակ ունենալով աջակցել փախստականների կողմից ղեկավարած և/կամ նրանց սեփականությամբ ձեռնարկություններին, ինչպես նաև խրախուսել տեղական ընկերություններին՝ ստեղծելու զբաղվածության հնարավորություններ փախստականների համար և իրականացնելու ներդրումներ նրանց հմտությունների զարգացման ուղղությամբ՝ այդպիսով նպաստելով երկարաժամկետ ներառական ազդեցության ձևավորմանը:

Ծրագրի նպատակները

Ծրագիրը միտված է խթանելու ներառական տնտեսական աճ՝ աջակցելով փախստականների և տեղահանված անձանց ձեռնարկատիրական գործունեությանը և խրախուսելով տեղական միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին ապահովել նրանց զբաղվածությունը: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին ԵՄ չափանիշներին համապատասխանելու գործընթացում: Այս համատեքստում գործարքը տեղական ընկերություններին հնարավորություն կընձեռի ներդրումներ կատարել արտադրական

գործընթացների արդիականացման ուղղությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանաչ տեխնոլոգիաներին: Ակնկալվում է, որ արդյունքում կբարձրանա հայկական բիզնեսների մրցունակությունը եվրոպական շուկայում՝ նպատակ ունենալով Ծրագրի ներդրումների առնվազն 70%-ը համապատասխանեցնել «Կանաչ տնտեսության անցում» («ԿՏԱ») ծրագրի չափանիշներին:

Ծրագրի անցումային ազդեցությունը

Ակնկալվող անցումային ազդեցության (ETI) գնահատական՝ 80

Մրցունակ. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ը կընդլայնի իր՝ ՄՓՄՁ վարկային պորտֆելը՝ հատուկ ուշադրություն դարձնելով մարզային ՓՄՁ-ների ընդգրկմանն ու նոր հաճախորդների ներգրավմանը:
Դիմակայուն. Ակնկալվում է, որ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿԸ» կպահպանի իր վարկային պորտֆելի բարձր որակը:
Ներառական. Ծրագիրը կբարելավի տեղահանված անձանց համար ֆինանսավորման հասանելիությունը և կնպաստի նրանց ինտեգրմանը աշխատաշուկայում՝ ՄՓՄՁ-ների կողմից աշխատատեղերի ստեղծման և հմտությունների զարգացման միջոցով:

Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) երկարամյա գործընկերն է: Այն Հայաստանի 10-րդ խոշորագույն բանկն է՝ ակտիվների ընդհանուր ծավալով, և 11-րդը՝ վարկային համախառն պորտֆելով, համապատասխանաբար՝ 3.7% և 2.9% շուկայական մասնաբաժնով 2025թ. տարեվերջի դրությամբ:

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

10,000,000.00 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր գումարը

10,000,000.00 ԱՄՆ դոլար

Հավելյալություն

Ֆինանսավորման կառուցվածք. ՎԶԵԲ-ն առաջարկում է ֆինանսավորում, որը կոմերցիոն աղբյուրներից հասանելի չէ շուկայում՝ ողջամիտ պայմաններով և դրույթներով:
Ստանդարտներ և ֆինանսական չափանիշներ. Ծրագիրը նպաստում է ավելի բարձր ֆինանսական ստանդարտների ընդունմանը: Ֆինանսական միջնորդների շրջանակի քաղաքականության հայտարարագրի, ֆինանսական պայմանագրային պարտավորությունների հուսալի համակարգի և բնապահպանական ու սոցիալական պահանջների (ESD) պահպանմամբ կապահովվի վարկային միջոցների պատշաճ օգտագործումը, բնապահպանական և սոցիալական լավագույն փորձին համապատասխանեցումը, ինչպես նաև ֆինանսական ռիսկերի կառավարման ամրապնդումը:
Ֆինանսավորման նորարարական կառուցվածքներ և/կամ գործիքներ. ՎԶԵԲ-ն

առաջարկում է կանաչ ֆինանսավորման նորարարական գործիք, որն իր կառուցվածքում ներառում է կլիմայական, բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) ստանդարտներ և/կամ հաշվի է առնում կլիմայական, բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) ռիսկերը:
Ռիսկերի մեղմացում. Վարկը կօգտվի նաև առաջին վնասի երաշխիքից՝ մասնակի փոխհատուցելու «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ի կողմից տրամադրած հետագա վարկերի հնարավոր կորուստները, ինչպես նաև բարձրացնելու «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ի ռիսկերի ընդունելիության մակարդակը՝ փախստականների կողմից ղեկավարվող ՓՄՁ-ներին վարկեր տրամադրելու նպատակով:

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է «ֆինանսական հաստատություն» բնապահպանական կատեգորիայի (2024 Շրջակա միջավայրի և սոցիալական քաղաքականություն): «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ը ՎԶԵԲ-ի ներկայիս հաճախորդն է և գործում է շրջակա միջավայրի և սոցիալական (ՇՄՍ) չափանիշներին համապատասխան՝ առկա պարտավորությունների շրջանակում: Որպես ՎԶԵԲ-ի գործող հաճախորդ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ը պարտավոր է պահպանել ՎԶԵԲ-ի ՇՄՍ պահանջներին համապատասխանող շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման քաղաքականությունն ու ընթացակարգերը: «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ը պարտավոր է գործարկել և պահպանել ՇՄՍ կառավարման համակարգ՝ ենթածրագրերի հետ կապված ՇՄՍ ռիսկերն ու ազդեցությունները արդյունավետորեն գնահատելու, կառավարելու և վերահսկելու նպատակով: Այն պետք է համապատասխանի ՎԶԵԲ-ի՝ 2024 թվականի Շրջակա միջավայրի և սոցիալական քաղաքականության (ՇՄՍՔ) 2-րդ, 4-րդ և 9-րդ ՇՄՍ պահանջներին, ներառյալ՝ բացառությունների ցանկի պահանջներին: «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ը նաև պարտավոր է ՎԶԵԲ-ին ներկայացնել տարեկան ՇՄՍ հաշվետվություններ՝ հանգամանորեն նկարագրելով ՇՄՍ պահանջների համապատասխանության ապահովումը և անդրադառնալով տարվա ընթացքում ի հայտ եկած ՇՄՍ խնդիրներին:

Կանաչ օրակարգին համապատասխանության գնահատում

Գնահատվել է, որ Ծրագիրը համապատասխանում է Փարիզյան համաձայնագրին և համահունչ է ՎԶԵԲ-ի՝ Փարիզի համապատասխանեցման մոտեցմանը, որը կիրառվում է անուղղակիորեն ֆինանսավորվող ֆինանսական միջնորդների գործառնությունների նկատմամբ: Գնահատման հիմքում ընկած են. գործընկերոջ պարտավորության կիրառումը (1-ին հենասյուն) և ենթագործարքների զննման սկզբունքները (2-րդ հենասյուն): Վարկային միջոցների 70 տոկոսը կուղղվի «Կանաչ տնտեսության անցում» («ԿՏԱ»/GET) ներդրումներին:

Տեխնիկական աջակցություն և դրամաշնորհային ֆինանսավորում

Այս նախագիծը ներառում է ԵՄ-ի կողմից Ծրագրի շրջանակում ֆինանսավորվող համապարփակ տեխնիկական աջակցություն, որի նպատակն է աջակցել Հայաստանի ֆինանսական միջնորդներին, այդ թվում՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ին, ծրագրի հաջող իրականացման, այդ թվում՝ մարքեթինգի, ենթածրագրերի նախա- և հետֆինանսավորման գնահատման, ինչպես նաև ընդհանուր մշտադիտարկման և հաշվետվությունների պատրաստման գործում:

Բացի այդ, վարկը համալրվում է ԵՄ-ի կողմից տրամադրվող դրամաշնորհով՝ 2.4 միլիոն եվրո

գումարի չափով, որը հետագա վարկերի ձևաչափով կտրամադրվի իրավասու ենթավարկառուներին՝ որպես ներդրումների խթան: Այս խթանները նախատեսված են ԵՄ չափանիշներին համապատասխանող տեխնոլոգիաներում ներդրումների խրախուսման համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով կայուն և կանաչ տեխնոլոգիաներին, միաժամանակ աջակցելով փախստականների կողմից ղեկավարած բիզնեսներին և նպաստելով նրանց ինտեգրմանը տեղական տնտեսության մեջ: Վարկին զուգահեռ առկա է նաև մինչև 0.9 միլիոն եվրո առաջին վնասի երաշխիք, որը նախատեսված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ի կողմից տրամադրվող հետագա վարկերի հնարավոր վնասների մասնակի փոխհատուցման համար՝ այդպիսով բարձրացնելով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ի ռիսկերի ընդունելիության մակարդակը՝ փախստականների սեփականությամբ և նրանց կողմից ղեկավարած ՓՄՁ-ներին վարկեր տրամադրելու նպատակով: Առաջին վնասի երաշխիքը տրամադրվում է ԵՄ-ի՝ «ԵՄ–ՎԶԵԲ տեղական արժույթի ծրագրի» շրջանակում:

Ընկերության կոնտակտային տվյալներ

Արա Մակարյան
info@armswissbank.am

+37460757000
www.armswissbank.am

Անցումային շրջանի ընկալումը

Այստեղ կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ. ՝ +44 20 7338 7168
Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք ՎԶԵԲ-ի գնումներ:

Հեռ. ՝ +44 20 7338 6794
Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

ԲՍՔ-ն և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել

«էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են ԲՍՔ-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել Տեղեկությունների հասանելիության քաղաքականության կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով

ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ իր՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը ՝ իմանալու ավելին ԾՀԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես Դիմում ներկայացնել ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՀԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com ՝ ԾՀԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: